

չտարեանի տանը եւ նա երգւեց, որ ինքը հրամայել է խփել եկեղեցու զանգերը եւ բանալ դաշտի խուփը:

Կ. Հայրապետեանին եւ Դ. Քարաբաշին նշանակեցին թեթեւ ուտտիժ — եօթ օրով անալին ձերբակալութիւն:

Դեռ երկար Գոյանէ իրաւաստեանը լաւով յիշում էր իւր ոտաւ երգումը:

— Այժիկ, որով եւ յղի էի երգումն օրին, եղաւ անբաղդ, նրա սրբին կախեց, աղջիկը մեռաւ, մեռաւ եւ ումուսինը, տհա՜ն քեզ սուս երգում...

Այսպէս վերջացաւ Մ. Նալ բանդ եանի սրբերդ ու իման վերջին արարուածը:

ԳԷՈՐԳ ԶՈՒՐԱՐ

Նոս-Նախիջևան

Ք Ր Ո Ն Ի Կ

ԱՎԿԱՐԿ ՄԸ ԱՅԺՄԵԱՆ ՀԱՅ ՄՏԱԽՈՐ ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՅ

Վերջին մէկ երկու տարուան ընթացքին Հայաստանի ու արտասահմանի մէջ ի յայտ եկած հայ մտաւոր կեանքի կարեւորագոյն երեւոյթներուն կ'ուզեմ նուիրել այս քրոնիկա:

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստան, ինչպէս եւ թիֆլիս, Բազու կամ Մոսկուա հրատաքակուած գրական, բանասիրական կամ այլ բնոյթ ունեցող բոլոր հատորներուն վրայ որոշ ծանօթութիւն չունինք: Հակառակ մեր բազմապատիկ դիմումներուն, դեռ անոնց ամենքը կանոնաւորապէս ստանալու կարելիութիւնը չունեցանք: Պիտի խօսիմ ուրեմն այն գործերուն վրայ միայն որ ինծի զրկուած են:

Ասոնց մէջ Հայտ կարեւոր տեղ մը կը բռնեն «Նոր», Հայաստանի Պետական Համալսարանին Գիտական Տեղեկագիրները» եւ

Նոր Ուղի ամսագրին թիւերը (1—10) զոր ստացած եմ:

Տեղեկագիրներէն մին, (Երեւան, 1927, թիւ 2—3), ստուար հատոր մը (գին՝ երկու տոլար 10 սէնթ), կը պարունակէ հետեւեալ ուսումնասիրութիւնները.—

1. Յակոբ Յովհաննէսեան, Հ. Ս. Ա. Հ. Պետական Համալսարանը: 2. Մանուկ Աբեղեան, Հին գուսանական ժողովրդական երգեր (մեծապէս շահեկան ու հմտալից ուսումնասիրութիւն Նահապետ Գուշակի վերագրուած տաղիկներու լեզուին տաղաչափութեան, գիղեցկագիրտութեան եւ այլ մասնալատութեան), Ա. Տէրտէրեան, Եկատողութիւններ մեր գիւղագիրներին մասին (կարեւոր ուսումնասիրութիւն Հայ գիւղի կեանքին եւ անոր հուրբուած արեւելահայ վիպասաններու, բանաստեղծներու գործերուն), Հ. Զօրեան, Արաքսի խորհրդի հարկային քաղաքականութիւնը աւատական Հայաստանում, Գ. Ջաղեթեան, Անգրկող-

կասեան կոմիսարիատի Բօնեբը, Գ. Ղափանցեան, Յարեթական լեզուաբանութիւնն ու տեսութիւնը, 7. Լէօ, Հայոց Պատմութեան հարցերից, 8. Հ. Նաւակատիքեան, Մարմինների էլեկտրացման պայմանների մասին, 9. Ա. Ս. Տէր Մկրտիչեան, Խոտէզարդի կառուցումը վերին սահմանի տուեալ պարբերութիւնների միջոցով, 10. Ալ. Յակոբեան, Կլասիկ տերմոտինամիկը եւ քիմիական կոնստանտը, 11. Ստ. Ղամբարեան եւ Ուն. Չալիկեան, Օ—Բենզոլիլ, N, N—Դիբենզիլհիտրօքսիլամինի քայքայումը, 12. Ռուսերէն գիտական ուսումնասիրութիւն մը, 13. Բ. Հ. Բալանեան, Ձորային շրջանների հողերի հումուսի ազօթի հարցի աթիւ, 14. Լ. Ռոտինեան, Մերձաբաքսեան ճահճների հողային եւ հիտրոլոգիական ուսումնասիրութիւնները:

Թիւ 4 տեղեկագրին (գին՝ մէկ տոլար) պարունակութիւնն է. — 1. Ս. Աբեղեան, Հին դուսանական ժողովրդական երգեր (չարունակութիւն), 2. Հ. Մանանդեան, Նիւթեր Հին Հայաստանի տնտեսական կեանքի պատմութեան, 3. Յակոբ Զօրեան, Գնչաւորական Հայաստանի տնտեսական շարժումները Ժ. դարում, 4. Ռուսերէն ուսումնասիրութիւն մը:

Թիւ 3—5 Տեղեկագրի վերջը յիշատակուած է Թէ Թիւ 1 տեղեկագրին մէջ երեցած յօդուածներէն հետեւեալները թարգմանաբար հրատարակուեցին եւ գերմանական եւ ֆրանսական հանդէսներու մէջ: Ս. Ղամբարեանի «Բենզոլիլպիրօքսիտ եւ սեկունտեր ամինները» ամբողջութեամբ լոյս տեսեւ է Պերլինի Berichte der deutschen chemischen Gesellschaft 1925 թիւ 8ին մէջ, Գ. Բալանեանի «Բամպակինու երկու նոր բակտերիոգէներ» աշխատութիւնը Centralblatt für Bakteriologie 65րդ հատորին մէջ, ԲԺ. Ե. Բալանեանի «Հայաստանի ազգաբնակչութեան հելմինտօֆաունայի ուսումնասիրութիւնը» Archiv für Schiffs und Tropenhygienich 1926ի հատոր 30ին մէջ, Հրաչեայ Ասատեանի Գեօրանների եւ Թումարների կրօնը, Ֆրանսերէն հրատարակուած է Ֆրանսերէն Մամբլէի հեղինակի Revue des Etudes Arméniennes-ի մէջ: Տեղեկագրի մասին յօդուածներ լոյս տեսեւ են Centralblatt der Chemie հանդէսին մէջ:

Թիւ 4 տեղեկագրի վերջը գրուած է ցողացալը Ուորհ. Հայաստանի Համալսարանի հրա-

տարակուլեմամբ լոյս տեսած գրքերու. Ա. Վիմատուզ (երբ Համալսարանը եւ զայն հոգանաւորող կառավարութիւնը զեռ շատ աղքատ էին տպագրական հրատարակութիւն ընել կարենալու համար), 1. Ա. Տ. Պօղոսեան, Ընդհանուր կենդանաբանութիւն, 2. Գուտման, Ծիգիկայի հիմունքները, Թարգմ. Գ. Յակոբեանեանի, 3. Ալ. Յակոբեան, Ֆիզիկա, 4. Պօսսէ, Դասընթաց տիֆֆերիցիալ եւ ինտեզրալ հաշիւների, Թարգմ. Ա. Տոնեանի, 6. Մանուկ Աբեղեան, Համաոստութիւն հայ ժող. վէպի եւ պատմութեան, 7. Հ. Նաւակատիքեան, Դետերմինանտներ, 8. Գրուսայմ, Բոյսերի կարգաբանութիւնը, Թարգմ. 9. Հ. Նաւակատիքեան, Վերլուծական երկրաչափութիւն, մասն առաջին, երկրորդ, երրորդ, 10. Ս. Տիգրանեան, Իրաւունքի պատմութիւն, 11. Վ. Արծրունի, Մարդակազմութիւն, մասն առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ: 12. Ա. Բալանեան, Հնագիտութիւն, 13. Հ. Մանանդեան, Հայաստանի պատմութիւնը թուրք-թաթարական արշաւանքների շրջանում, 14. ԲԺ. Գ. Հայրապետեան, Ընդհանուր սաղմնաբանութիւն, 15. Մեշչերսքի, Տեսական մեխանիկա, Թարգմ. Գ. Յակոբեանեանի, 16. Մորյեկ, Ուղղագիծ եռանկիւնաչափութիւն, Թարգմ. Ա. Տոնեանի, 17. Հ. Նաւակատիքեան, Հանրահաշիւ, 18. Սուրբանթեան, Հին յունական դրակուութիւն, 19. Յակոբ Յովհաննիսեան, Օրգանական քիմիա:

Բ. Ապակետիպ հրատարակութիւններ. — 1. Ս. Արցղեան, Կաթնատնտեսութիւն, մասն առաջին եւ երկրորդ, 2. Հ. Աճառեան, Պարակական հատընտիր, 3. Լէօ, Հայոց պատմութեան նորագոյն շրջանը, մասն առաջին եւ երկրորդ, 4. Ռ. Գարբիշեան, Էվոլյուցիոն թէորիա, 6. Հ. Ակունեան, Չեռնարկ քանակական անալիզի:

Գ. Տպագրական հրատարակութիւններ. — 1. Հ. Ս. Ռ. Հ. Պետ. Համալսարանի «Գիտական տեղեկագիր» (Թիւ 1, 2, 3, 4), 2. Կուշներ, Հասարակական ձեւերի զարգացումը, Թարգմ. 3. Հ. Ս. Ռ. Հ. Պետ. Համալսարանի 198 թուի ընդունելութեան քննութիւնների ծրագրերը: 4. Ռուս հայերէն տեխնիքական բառարան շինարարական կառուցումների:

Դ. Առանձին հատորով արտատպուած են Գիտական Տեղեկագրէն՝ Ե. Մանանդեանի, Ա. Ռաչատրեանի, ԲԺ. Ե. Բալանեանի,

Յովհ. Յովհաննիսեանի, Գ. Ղափասեցեանի, Ա. Տէրտէրեանի ուսումնասիրութիւնները:

Նոյն թիւ 4 Տեղեկագրէն կը տեղեկանանք նաեւ թէ հրատարակուած են արդէն Հրաչեայ Անտեսանի մեծ աշխատութեան, «Հայերէն արմատական բառարան»ի Ա, եւ Բ. հատորները, 1252 եւ 1350 էջ, Ա—թ տառ (պիտի բաղկանայ հինգ հատորէ, ամբողջին «կոնը՝ 60 տուար, չորս վճարմամբ՝ 15 տուար, արտասահմանի համար), եւ «Ռուս-հայերէն տեխնիքական բառարանը շինարարական կառուցումներ», զոր կազմած են Հ. Անտեսան, Հ. Զարգարեան, Զ. Յակոբջանեան, Դ. Տանեան, Զ. Բալազանեան, 502 էջ, գին 4 ռուբլի:

Մեր ազգային Համալսարանին ծոցին մէջ հայ աշակերթի զարգացման համար կատարուած այս բոլոր ուսումնասիրութեանց տիտղոսները կը յիշատակեմ այստեղ,— չկարենալով դժբաղդաբար անտեսցմէ ոմանց վրայ աւելի մանրամասնօրէն ծանոթանալ՝ ինչպէս պիտի ուզէի— ցոյց տալու համար արտասահմանի մեր հայրենակիցներուն թէ ի՞նչ լուրջ աշխատանք տեղի կ'ունենայ հոն՝ Հայրենիքի սրտին մէջ՝ հմուտ մտաւորականներու ձեռքով, եւ մղկնու համար մեր զաղութներու Հայութիւնը աւելի վերմ հետաքրքրութիւն ցոյց տալու դէպի ի հայ մտաւոր կեանքի այդ մեծ վառարանը:

Պէտք է ջանալ այդ հրատարակութիւնները՝ որ ամենամեծ մասամբ գումար գիտական ոգւով պարունակութիւն ունին՝ տարածել արտասահմանի մէջ: Ու պէտք է ջանալ մանաւանդ որ այդ մտաւոր աշխատանքին ընդարձակման ու զօրացման աւելի լուրջ նիւթաւ օգնութիւն հասցնել արտասահմանի Հայութիւնը բան ի՞նչ որ բրած է ցարդ (եւ ինչ որ ցարդ բրած է, բացի Մեղգոնեան նուիրատութեան տարեկան երեք հազար ոսկիէն, շատ քիչ բան է):

Հայաստանի գրական կեանքին մէջ մեծ ու հզօր նորութիւն մը, Նոր Ուլլի ստուար ու ճոխ ամապդիրն է, որ կը հրատարակուի 1927 Դեկտեմբերէն ի վեր, կառավարութեան ծախքով, ծառօթ գրողներու խումբի մը ղեկավարութեամբ: Բժշկութիւն ոգին կը տիրէ հոն բնաւատաբար, բայց ան մեծապէս շահեկան է եւ արժեքաւոր իր վկայական բաժինով եւ իր գրական, քանասիրական, ընկերական, գիտա-

կան ուսումնասիրութիւններով: Աստեղ մէջ կան տաղանդայից էջեր կամ հմտայից աշխատութիւններ: Աստեղ մայնուն մէջ աւելի կամ նուազ կը զգացուի խորհրդային երկիրներու մէջ տիրող վարչապետութեան՝ մարքսիզմին շուրջը, բայց Բակունցի, Ս. Զօրեանի, Դիմիտրիէանի, Ա. Բասահեանի, Մկրտիչ Արմէնի պէս գրողներու վէպերը, պատմածքները՝ արուեստագէտի գործեր են է՛ն առաջ, եւ անոնց առիթ տալով իրենց վիպողի կարողութիւնները նորանոր գործերով արտայայտուել են հրատարակելու, Նոր Ուլլին մեծ ծառայութիւն կը մատուցանէ մեր արդի գրականութեան: Նոյնը կարելի է ըսել Արսէն Տէրտէրեանի, Արշակ Աղամեանի, Գ. Վանանդեցիի, Ս. Նանոյեանի, Հայկ Աղունցի, Պ. Մալինցեանի, Ռ. Գաբրիէանի, Գ. Ղափասեցեանի, Վ. Դօրգանեանի եւ այլոց զանազան նիւթերու նուիրած ընդարձակ ու մանրազնին ուսումնասիրութեանց մասին, որ մերթ հըմտալից ժամանակիտական աշխատանքներ են, ու մերթ, թէպէտ՝ աւելի կամ նուազ չափով միակողմանի, համոզման կիւրմութեամբ լի արտադրութիւններ են, ուշագիւր, համբերատար ու մեթոտիկ քննութեան յատկութիւններ ի յայտ կը բերեն, ու որոշ կէտերու վրայ նոր, շահեկան ու ճիշդ սեռութիւններ կը պարունակեն (Մակինցեանի ուսումնասիրութիւնը Յովհ. Թումանեանի վրայ, օրինակի համար, կամ Արշակ Աղամեանի յօդուածը Ռ. Թէրլէմէզեանի «Երաժշտական խնդիրներու» նուիրած մակերեսային ու թէորիատով մէկ գրութեան առթիւ, ուր «Երաժշտութիւնը պրոլետարականացնելու եւ անով յեղափոխական ոգին արտայայտելու» պէտքին մտահոգութիւնը ծայրահեղութեան տանելով, այս վերջինը մինչեւ իսկ Պէթովրի «Եկմանք»ին մէջ «սպանիական իմպիւրիզմի» դէմ դադուեցային ժողովրդի պայքարի պատկերացումը» տեսնելու կ'իլլէր, գրական կամ գեղեցկագիտական քննադատութեան պատուական էջեր են):

Աստեղ մէջ կ'երեւայ նաեւ, մերթ ընդ մերթ, ալեւոր եւ հոգւով ու տաղանդով միշտ առողջ Շիրվանդազն, որուն «Կեանքի բովից» տիրոջտով ինքնակենսագրական էջերու շարքը (որ կը սկսի մտնութեան ու պատմութեան շրջանի յիշատակներէն եւ զոր մտադիր է հասցնել մինչեւ մեր օրերը), աւելնէ

զմայլելի գործերէն մէկն է բազմազանագործական եւ մեր ըրժանգակ ժամանակակից մատակարարութեան:

Բանաստեղծութեան բաժինը թոյլ է, ու գէթ առ այժմ՝ շատ սահմանափակ տեղ կը բռնէ հոն, մերթ րոնազրօսիկ է եւ միօրինակ. բայց եւ կան հոն Զարեհի եւ Նորենցի էջերէն սմանք որ գեղեցիկ են, Գուրգէն Մահարիի մէջ քանի տաղերը որ սիրուն են: Ինչպէս որ է, Նոր Ուղիին խոշոր ճիւղ մը կը կազմէ Հայաստանի մտաւորականութեան կողմէ կատարուած, եւ արտասահմանի մեր գրողներուն ու գրասէրներուն համար անհրաժեշտութիւն մըն է հետեւել այդ հանդիսին, իբր մեր հայրենի գրականութեան մէջ նոր ու ինքնատիպ փուլը ներկայացնող արտագրութեանց խորքի մը:



Վերջերս ստացայ նաեւ չորս նորագոյն թիւերը Գրական Գիրքերում ամսագրին որ, նոյնպէս «գրական հրատարակութիւն մըն է», բայց աւելի շեշտուած ու մեթոտիկ կերպով կուսակցական ու յեղափոխական ոգի ունի: Զայն հրատարակողն է «Խորհրդ. Հայաստանի Պրոլետարական Գրողների Առաքարցիան» Այդպէս աշխատակցողները մեծ մասամբ երիտասարդներ են, նորագոյն սերունդը Հաստատարական աշխատակողներուն: Կրակոտ հրատարակութիւն մըն է, նոր կրօնքի մը խանգաղառ հաւատացի՝ աշներու հաւաքական մտաւոր ճիւղը, ուր վարդապետութիւնը ծայրագիծէն կ'իջնէ, բայց ուր զուտ գրական տեսակէտով իրապէս արժէքաւոր է: Վեր չեն պակսիր: Բանաստեղծութեանց բաժինը, — թէեւ ընդհանրապէս միազոյն, այսինքն շարունակական վառ կարմիր, որով եւ քիչ մը շատ միօրինակ, — աւելի ճոխ է քան Նոր Ուղիին մէջ: Այդ բոլորին մէջ, սակայն, դարափոխներու ետեւ մը կայ, երիտասարդ ու բուն համոզումներու շերտութիւն մ'ի, նոր իտէլայի մը լոյսով աշխարհն ու կեանքը բացատրելու, արտայայտելու եւ վարելու խանդավառ ձգտում մը եւ անիկայի ճիգերու պարզում մը, որ չեն կրնար չհասգործուի՝ իբր ընկերական, գեղեցիկագիտական, պատմական ու հոգեբանական երեւոյթ՝ հայ գրական կեանքի բոլոր ձեւերուն հետեւիլ ուզող մտքերը:

Նոր Ուղիի 9—10 միացեալ մեծածաւալ թիւին մէջ կը տեսնենք որ Պրոլետ-Գրողների Առաքարցիան Երեւանի մէջ ընդհանուր ժողով է ունեցրել եւ լսել է Նոր Ուղիի խորագրութեան գեղեցիկութիւնը, զնահատել է իր քուէարկած բանաձեւին մէջ այդ հանդէսին կատարած գրական գործը յօգուտ նոր գաղափարաբանութեան տարածման ինչպէս եւ յօգուտ գրականութեան, բայց գտել է որ հոն Պրոլետ-Գրողներու մասնակցութիւնը անբաւական է եւ թէ «ուղեկից»ները ամենամեծ տեղը կը բռնեն, թէ հոն մերթ կ'անցնին գործեր որ «զուրկ են իտէլոգիական կայունութիւնից են որոշ տեղերում» արտայայտում են մեղանական տրամադրութիւններ, անհրաժեշտ համարել է որ Պրոլետ-Գրողներու Առաքարցիան իր ներկայացուցիչն ունենայ Նոր Ուղիի խմբագրութեան մէջ եւ Պրոլետ-Գրողներ աւելի մեծ թուով աշխատակցին անոր, ուժեղցուի ուսական, անդրկողմասեան եւ այլազգի գրականութիւններէ — առաւելապէս պրոլետարականէն — թարգմանութեանց բաժինը, գրախօսականներուն մէջ մարքսիստական ոգւով պայանի տարրը շեշտուի, ջանք ըլլայ վերապէս «ուղեկից գրողներու դէպի պրոլետարականութիւն արագ կերպով դիւրեւորման» նպատակը:

Աստեղ բնական երեւոյթներ են երկրի մը մէջ ուր կը տիրէ «պրոլետարատի գիկտատութեան» ծանկայի է սակայն որ կուսակցական ոգին չափազանցութեան տանելով, «Պրոլետ-Գրողների Առաքարցիան» Հայաստանի գրականութիւնը բարոյութիւն արուեստական, բունգրքային, միօրինակ ու անկենդան ճառարտութեան մը չփոխարկէ: Բարեբաղդաբար, տաղանք, երբ կայ, ո եւ է վարդապետութեան կեդրուր կը ճեղքէ ու իր ծայրիկները դուրս կը հանէ, իրականացնելով գրականութեան եւ արուեստի բուն նպատակը, Ֆիդելիցիկը: Ու տաղանքը գոյութիւն ունի ինչ է: Նոր Ուղիին եւ թէ՛ Գրական Գիրքերում մէջ: Հայ գրականութեան նոր եւ ինքնատիպ փուլ մըն է որ Հայաստանի մէջ սկսած է զարգանալ, եւ որ արդէն տուած է իր քանի մը գեղեցիկ ու կենդանի գործերը եւ հետագիւտի պիտի տայ աւելի մեծ թուով, աւելի այլազան գրողներով այդպիսի գործեր՝ գեղեցիկագիտական արժէքով առական հանգամանք ունեցող:

Գրական Դիրքերումի երեք թիւերուն մէջ,
բաց ի Յակոբ Յակոբեանէ որ հին Պրոլետ-
Գրող է, բաց ի Մկրտիչ Արմէնէ, Գուրգէն
Մանարիէ, Ալադանէ որ արդէն մեզի քիչ
շատ ծանօթ են իբր այնտեղի «նոր»եր, գոտայ
նաեւ մեզի անծանօթ «նոր»եր, որոնց ոտա-
նաւորներուն մէջ շահեկան բաներ կան:

Գեղեցիկ վիպերդ մըն է, ճոխ ու ինքնա-
տիպ ոճով գրուած, — թէեւ անհասար, թու-
մանեանի վիպերգներուն կատարելութիւնը
չունեցող — Սողոմոն Տարօնցիի Այց կայ - Աշ-
տարակը, Բազուի հին եղբրական թաթար
«լեզներէ» մը ներշնչուած.

... Որպէս մի սպիտակ ուրու,
Արիւնոտ թռչունի թեւ,
Լողում է կապոյտ ջրերում
Մի աղջիկ փխրուն ու թեթեւ:

Լողում է ջրում այս մառ,
Յետոյ բարձրանում ափերին.
Մօտենում մի քօշքի մարմար,
Անմարմին փրփուրէ փերին:

Ահա նա, մի սիւն փրփուրէ,
Մի աղջիկ փխրուն ու թեթեւ.
Բարձրացաւ քօշքը մարմարէ
Ու հալեց դռների ետեւ...

Հետաքրքրական են Հ. Երուանդունիի
Նիւ Եորքի տեսիլները, կողկասցի պրոլետար
ու համաշխարհային Հայ գիւղացիի մը սքանչա-
խառն մոլեգնութեամբ լի ակնարկը Եանքե-
նիւթական զօրութեան տիտանական
ոտսանին մարարտաւան ու ճշիւ փարթա-
մութեան վրայ, որու քով մօթ թանկէններու
մէջ ընչազօրեկներուն սեւ թշուառութիւնը
աւելի բնագոյեցողիչ կ'երևայ:

Երկար է այդ տեսիլներու շարքը, անհա-
ւասար ոճով, միօրինակ յաճախ, «երթ» լրա-
գրական բանագոյիւ շեշտ առնող, քայց մերթ
ճշմարիտ ու հզօր բանաստեղծութիւն մը կը
շողայ հին.

Մերկ հողի կրծքից շէնքերից տիտան,
Հասակ են նետել բիրեղների պէս.
Մարմարէ մարմնով կոյսեր են նրանք,
Երկնի հողմերին համբոյր են տալիս:

Հազար աչք ունին նրանք ամենքը,
Վարսերը նրանց ողջ աստղազարդ են.
Երկաթածին են նրանք ամենքը,
Քո փառքը կերտող թանկագին զարդ են:

Նևարիները քո՝ հեռագրամիւրի,
Կայարաններդ՝ ռեկ ուրկրամոլի,
Երկաթուղիներդ կուռ շոշափուկներ,
Գետնուղիներդ՝ աղիքներ միշտ լի:

Գործարանը քո սիրտն է կենսավառ,
Պիրկ երակներում բրկաթը արիւն,
Ծխնելոյցը քո ծըխամորճը վառ,
Երկնքումն անվերջ ամպեր ես նետում:

Արեւից էլ շատ լուսատու, պայծառ
Լուսարձակի պէս աչեր ունի դու.
Լոյսի է փոխում քո շուրջը խաւարն,
Ելեքաղբական հրգօր լոյս ես դու:

Փողոցները քո խըրամներ են խոր,
Եւ ամբոխներդ ծով զօրամասեր,
Կարծես երկնի դէմ դիրք ես մըտել դու,
Երկինքը քո դէմ մանուկ մի անզօր:

Աշտարակներըդ նիզակներ են մերկ,
Ծխնելոյցներդ կուռ թրուածիւրներ,
Ու հերկել ես դու երկնի կուրծքը մերկ,
Հազար ջրբանջք ես բացել դու այնանդ:

Նիւ Եորք, դու հեռից մի անտառ ես խոր,
Շէնքերի բլրերդ անասան ծառեր՝
Պրոլետարիատի անկած այգի դու,
Պրոտդները քո միշտ հարուստին կեր...

Նրան որ մինչ այժմ ապրել է անհոգ,
Էն շրքից փարթամ քո պալատներում,
Ու քեզ կերտողին բանտարկել անօգ
Փայտղիլով լի ցուրտ խրճիթներում...

Եւ սակայն կը գայ, Նիւ Եորք, ես գիտեմ,
Պոռթկումի օրը քեզ կերտողներս,
Այդ օրը պայծառ մենք պիտի թերնք
Որ դու նոր սիրով միշտ պաղարբիս...

Ուրիշ նոր մը, Սուրէն Վահուհի, ինծի կը
թուի բանաստեղծի ինքնադրոշմ խառնուածք
մը ունենալ, ահա՛ իբր մէկ տաղը, ուր
պրոդէտար երգիչը, անհաւասար՝ բայց մերթ
սիրուն սրամտութեամբ ու քնարերգութեամբ
լի տաղերով, կ'արտայայտէ իր իտէալը սիր-
ուած աղջկան մը, կը հրաւիրէ զայն համայն
ու քամահաճ պէպէք մ'ըլլալով չշատանայ, «նոր
օրերու ողբին» իւրացնել ու անով աւելի ներք-
նապէս հրապուրել ու սիրելի դառնալ:

Երկերի կապոյտ անրիծ տետրի մէջ
Լուսինն է գծել ինչպէս մի գէթօ:
Թըւացել է միշտ որ ես տեսնում եմ
Պրոֆիլը քո ղեղին մագերով:

Որպէս Շախապին միշտ բարձր ու բարձր
եթգել է քամին բուլվարի դիմաց:
Անշուշտ ներան էլ սեռական հարցը
Դարձրել էր ինձ պէս թեմեւ ու յիմար:

Ու երգել եմ ես աշնան լուսինը,
Մեր սէրն եմ երգել ու փողոցը ձեր,
Եւ դրա համար, անշուշտ, Լուսի՛կ իմ,
Ամէն զինազիտ ինձ կը նախանձիր:

Բայց հա որ իմ մէջ դեռ աշակերտ էր,
Վաղուց է արդէն զըլորել գետին,
Ու գպրոցական անմիտ «պօտ»ը
Պօտ է այսօր առանց չակերսի:

Եւ դու էլ արդէն վաղուց հասուն ես,
(Ռետիկուլը քո ինձ այդ է ասում),
Կարմիր շուրթերդ ինձ դեռ յուզում են
Եւ կարծես կրկին սէր են փութիւրում:

Բայց նոյնն ես ներքուստ եւ հին տրտունջը
Քօսում է նորից քո նամակներում:
Դանգաւում ես դու, որ ինչ որ լուրջ եմ,
Եւ վաղուց վաղուց ոչինչ չեմ զըրում:

Ծանկանում ես դու որ հիմալ ես էլ
Սովորեմ վարել, չըհագնել անշուք:
Աւարդ, չըգիտես որ այդ մասին դեռ
Ես չեմ կարդացել ոչ մի բրօշուր:

Սիրում եմ ես քեզ, բայց այդ ձեւերը
Ո՛ր, հին եմ ա՛յնքան, սիրելի Լուսիկ,
Թըքիր դու դրանց ու դարձիր մերը,
Պայքարում եղիր ինձ հետ միասին:

Թող նորից քամին աւելի բուլվարը,
Լուսինը թեկնի շենքերի վըրայ,
Իմ երգին այսօր, իմ երգին ա՛յլ է,
Ուրիշ պօէտներ թող երգեն դրանք:

... Մըտածիր, Լուսիկ, մըտածիր խորը,
Այս իմ խօսքերը իրաւ եմ գուցէ,
Մենք ուզում ենք միշտ կառուցել նորը,
Բայց պէտք է նոյնպէս եւ մեզ կառուցենք:

... Եթէ չես կարող. ապա, անգի՛ն իմ,
Ինձ մի՛ ըսպասի ոչ մի երեկոյ:
Ու ես կը փորձեմ ջնջել զանկիցքս
Այնքան սիրելի պրոֆիլը քո:

Գեղեցիկ է, սրտաշարժ ու նոր գեղեցկու-
թեամբ մը, Մկրտիչ Արմէնի Ոշոյ ճաղիկնե-
լը: Արձակի մէջ արդէն բանաստեղծ, Մկր-
տիչ Արմէն, որ ապահովապէս ամենէն օժ-
տըւած նորերէն մէկն է Հայաստանի դրական
արդի սերունդին, ոտանաւոր քերթութեան
մէջ ալ ահա կ'արտայայտէ իր քնարերգակի
հոգին: Զմայելոյ բանաստեղծութիւն, ուր Հա-
յաստանի բնական տեսիլներուն խանդաղա-
տալից պատկերացումը, ժողովրդական աշ-
խատանքի շնորհիւ հողէն դուրս հանուած
րարերար՝ մետաղին օրհներգումը եւ մեր
հայրենիքի մէջ նոր ստեղծուող կարաբաք-
ուեստի մը խորխոր փառաբանումը կը միա-
նան լայն շունչով ու փափուկ ոճով բանաս-
տեղծութեան մը մէջ զոր ամբողջութեամբ
կ'արտագրէի հոս՝ եթէ շատ ընդարձակ չըլ-
լար:

Սիրուն պատմածքներու քով զոր ունին
հոն Բակունց, Դեմիրճեան, Մկրտիչ Արմէն, Նա-
յիրի Զարեան, Արագի, քննադատական, բա-
նակոտական, ուսումնասիրական յօդուածնե-
ր բնական լայն տեղ կը բռնեն հոն, ու
բնականաբար կուսակցական մոլեռանդութիւ-
նը՝ դրական մարդին մէջ փռուած՝ յաճախ կը
հասնի արդեանք տարօրինակ չափազանցու-
թեանց: Նոյն բուռն ու աններող ողբն է զոր

ունէին առաջին դարերու քրիստոնեաները, որոնք նոր իտէալի եր Զեմմոնազօրէն յարած՝ հին հեթանոս քաղաքակրթութեան մէջ ա՛մէն ինչ. նոյն իսկ ամենին հոյակապ գեղեցկութիւնները, պիղծ ու դիւային կը գտնէին: Չուարձային այն է որ այս նորագոյն պարուստ գորոգները սկսած են զաղջ գտնել նոյն իսկ Սուրբաթեանի, Մակինցեանի, Կարինեանի պէս յայտնի ու եփուռ համայնավար զբաղէտներ: Պրոլետարական զբաղանութեան մը հարցին վրայ գրած եմ արդէն ուրիշ տեղ ու առտեղ ալ նորէն օր մը կ'արժէ վերադառնալ այդ հարցին, շատ լաւ կ'ըմտնեմ՝ ընչազուրկներու կեանքն ու հոգին արտայայտող արուեստ մը եւ գրականութիւն մը, որ արդէն գոյութիւն ունեցած ալ է անցեալին մէջ, ընչազուրկ կամ ոչ-ընչազուրկ զբաղէտներու ձեռքով յօրինուած, կ'ըմտնեմ յեղափոխական մարքսեան ոգւով զբաղանութիւն մը, բայց պայմանով որ ան արուեստի սահմանին մէջ գիտնայ մնալ, ճշմարիտ ներշնչումի արդիւնք ըլլալ, կենդանի եւ յուզիչ ըլլալ ամենքին համար առանց դասակարգի խտրութեան, «մարդկային» շնչով կրէ՛. եւ ոչ նեղ-կուսակցական, ու մանաւանդ չյաւակնի կարծի, — ինչպէս կ'ընեն պրոլետ-գորոգները, — Թէ ամբողջ մարդկային արուեստն ու գրականութիւնը ատոր մէջ սահմանափակուած է, կեանքը, ամբողջ մարդկութեան կեանքը, ամբողջ տիեզերքին կեանքը, իր այլազան երեւոյթներով, իր անթիւ խորհուրդներով, յաւիտեանական ու բերրաձեւ նիւթ է արուեստի:

Գրական Գիթերբուլմի քննադատներէն մին (Համօ Յովհաննէսեան) մէկ էջ գրած է նեղը գնելու համար խեղճ սիրուն Մկրտիչ Արմէնը իր Շըլլուս էր Էնթուզիաստը ֆանթազիին առթիւ (գար իբր բանաստեղծական նութը էջ մը արտասպէցինք Անահիտի մէջ): Իրողը ինքն իսկ գիտէ, եւ կը խոստովանի արդէն, Թէ Մկրտիչ Արմէնի, որ համոզուած «Պրոլետ-Գրող» է, գրական արտայայտութեանց մէջ յեղափոխական ոգին տիրող է՝ առանց, բարեբաղդաբար, անոնց գեղարուեստական հանգամանքը խաթարելու, բայց այս զրուածքին մէջ անոր չի ներք որ Էնթուզիաստ մը ցոյց տուեր է որ կ'երազէ, կը թափառի, երեւակայան կարինէ մը կը փնտոնէ ու սիրտը նուիրած է արդ ճորտական իդութեան, եւ ա-

նոր տեղ գտնելով հասարակ ու ամենօրեայ կոմսոմոլիստիկ տիկին մը, յուսախաբութեանն սահմանած ու շուարած՝ կը փախչի կ'անհետանայ. քննադատը, երթտաբարդ ու մոլեռանդ հաւատացեալ, քիչ մնաց պիտի ըսէ՛ր՝ հաւատացնել, չի հանդուրժեր որ կոմսոմոլիստիկ մը՝ նոյն իսկ ակամայ՝ անմեղօրէն՝ իր ընկանտն սովորականութեանը մէջ՝ որոշ ու անփնա ծծածաղիկութեան մը եթարկուի, — առանց նկատելու որ Էնթուզիաստ ալ հոս բանաստեղծօրէն, սրտաշարժօրէն ծծածաղիկ է: Գննադատը անընդունելի կը գտնէ որ վիպակի մը հերոս գառնալ Էնթուզիաստ մը, եւ անոր յափշտակութեան նիւթը՝ պրոլետարիատի դատին խանդավառիչ իտէալը — միակ ու տարամբք իտէալ — ըլլալու տեղ՝ անյայտ, անորոշ ու նոյն իսկ թերեւս կասկածելի Կարինէ մը ըլլալ... Վայ՛ արուեստին ու գրականութեան, եթէ գանձք սեղմեն այդ աստիճան նեղ ու քառակուսի վանդակի մը մէջ. ուր Գեղեցկին Թոշուը — առանց որուն Արուեստ չկայ — բոպէ մը չի կրնար ապրիլ: Ամէն հեղինակ անշուշտ պէտք է ունենայ իր աշխարհայեացքը, իր տիրական ոգին, որ սակայն պէտք է զգացուի իր գործին մէջ եւ ոչ բռնաբար ու բրտաբար փոռի ու իշխէ հոն, ճշմարիտ ու տեսական զբաղէտը այն է որ կեանքը իր բոլոր երեւանքով կ'ըմտնէ, եւ իր նախասիրութիւններն ունենալով հանգրձ՝ կը ձգտի արտայայտել մարդկային հոգւոյն բոլոր շարժումները, որոնց մէջ՝ մարդկային ճակատագրին մեծ հարցերուն վրայ խոլեմը, միատեքակատթիւնը (ըլլայ ան՝ ընկերական, կրօնական, գեղասիրական, ազգասիրական կամ պարզապէս սիրային), երազը՝ մէկ բառով, հակառ տեղ ունի, որովհետեւ առանց անոր՝ Արուեստը դասագիրք մը կը դառնայ, եւ կեանքն իսկ՝ միօրեանով ու անհոգի մարմնամարդանք մը: Երբ մանաւանդ միօրեան «Թէորին», կուսակցական բանաձեւը կը մնայ, վէպը կամ բանաստեղծութիւնը կը դադրի գրականութեան հետ ու եւ կապ ունենալէ եւ, ինչքան ալ ամբաքիզմին կամ ու եւ իլովի հաւատարմի արձագանք ըլլայ, կը՝ դառնայ լրագրական ֆրագաբանութիւն, եւ այդպիսի ճշկը, արձակ թէ ոտանաւոր, բաւական կարելի է գտնել Գրական Գիթերբուլմի մէջ, էջեր որ «պրոլետ» են՝ ինչքան կ'ուզէք, բայց «գրականութիւն» չեն...

Գրական Գիրքերումէն կ'իմանանք թէ Եղիշէ Ջարենց, որ բաւական ատենէ ի վեր քիչ բան կը հրատարակէր, բանաստեղծութեանց նոր հատոր մը ի լոյս բնծայեր է, «Էպիգրամական լուսարաց», զոր կը մագթենք կարենալ տեսնել ի մօտոյ: Իր քերթութեամբներու շարքը՝ «Լեռնիկրատեան Գիկից», Նոր Ուղիի 9—10 թիւին մէջ, բարձրօրէն եւ քնարերգականօրէն յեղափոխական, իր լուսազօյն էջերուն հօր շունչովը լի է, եւ այն էջը զոր կ'արտատպենք Անահիտի ներկայ թիւին մէջ, Պետրո - Պաւլոսկեան բանտի մէջ խոկում մըն է, ուր բանաստեղծին կ'երեւայ այնքան յուզիչ տեսիլով մը՝ Միքայէլ Նալբանդեանի մեծ ստուերը: Կ'իմանանք նաեւ թէ Աւետիք Խահակեան հրատարակեր է քանի մը ամիս առաջ շաւրիանքի ցիպուխը վերնադրով հատոր մը ուր հաւաքած է վերջին տարիներս իր յօրինած արձակ պատմութեանն ու էջեքաթները, որոնց մէջ իր լուսազօյն էջերէն կան, հասուն մտածումի ու գուսպ քնարերգութեան գեղեցիկ կտորներ:

Հայաստանէն վերջերս մեզի եկած ուրիշ մեծարժէք գործ մը, Գարեգին Արքեպիս. Յովսէփեանի մէջ նոր հրատարակութիւնն է «Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց Պատմութեան մէջ, պատմահնագիտական ուսումնասիրութիւն, Մասն առաջին», տպուած Վաղարշապատ 1928ին, Խ. Հայաստանի կառավարութեան արհեստագիտութիւնի՝ ինչպէս հեղինակն ինքն իսկ կը յայտնէ. իր յառաջաբանին մէջ, Գարեգին արքեպիսկոպոս մեր ամենէն հմուտ ու կարող բանասէրներէն մին է, մասնաւորապէս մանրանկարչութեան, զարդարուեստի ինչպէս եւ ճարտարապետութեան ու քանդակագործութեան մասին իր ցարդ հրատարակած աշխատութիւնները առաջնակարգ արժէքով գործեր եղած են. իր ծանօթութիւնը Հայոց պատմութեան, մասնաւորապէս Ջաջարեանց փառաւոր շրջանի եւ յաջորդ շրջաններու արեւելեան Հայաստանի պատմութեան եւ այդ շրջաններուն երեւան եկած հայ արուեստի ամէն ձեւով արտադրութեանց, ընդարձակ է ու խոր՝ անմական երկար ու մեթոսիկ հետախուզութիւններով

ճոխացած: Իր հրատարակելի գործերը բազմաթիւ են եւ ինքնատիպ, խելացի ու ճոխ ծրագրով մը յղացուած: Այդ ծրագիրը հեղինակը յատկօրէն պառզած է ներկայ աշխատութեան յառաջաբանին մէջ: Անիի անկումէն յետոյ Ջաջարէ եւ Իւսնէ տպաստարներու եւ անոնց գործը շարունակող քաջարի, ազգասէր եւ արուեստասէր հայ պետերու շրջանին, որ այնքան քիչ ծանօթ է՝ մանաւանդ արեւմտեան Հայոց, քաղաքական ու գեղարուեստական պատմութիւնն է միանգամայն՝ որ կ'առաջադէ գրել:

Ջաջարեանց շրթերով սկսած արեւելեան Հայաստանի քաղաքական եւ մտաւոր վերածնութեան մի խոշոր երեւոյթ էր մեր պատմութեան մէջ, որ իր զորմնէն էր եւ նաեւ հետագայ դարերի արուեստի եւ քաղաքականութեան, մասամբ եւ քաղաքական կեանքի վրայ՝ այն չափով որ այդ շրջանում ծագած իշխանական տոհմերը շարունակուած են գեղարար հանդիսանալ եւ ապագայում: Գնտնողական Հայաստանի վիճակը, որքան եւ քաղաքականապէս ենթակալ իրար յաջորդող փոխազդեցութիւններ, մի ամբողջութիւն է կազմում Ջաջարեան եւ մեծկուսական շրջանների հետ, եւ հետզհետէ միայն անոնց, մինչեւ ԺԷ, ԺԸ, դարու մտաւոր եւ քաղաքական վերածնութեան նոր փորձերը:


«Ժամանակով մեզ աւելի մօտ լինելով այդ մեծ շրջանը, բնականաբար եւ աւելի հարուստ է խոր ստեղծագործական քաղմատեսակ մնացորդներով՝ բանաստեղծութեան իւրաքանչեւ զրկանութեան հետ՝ նաեւ ճարտարապետական պէտքիստութիւններով եւ մանաւանդ հազարաւոր ձեռագիրներով, մանրանկարչական եւ մշակոյթի քաղմատեսակ արժէքների բովանդակութեամբ, մանր արուեստի մնացորդներով... բայց տարբարազարբ հէնց այդ շրջանի ի իրեւ ամբողջութիւն քիչ է ենթարկուած գիտական ուսումնասիրութեան, այն հասկանալի պատճառով որ աղբիւրները ցրուած են եւ ոչ բաւարար չափով օգտագործուած: Բայց ոչ միայն այդ հնարաւոր է երկարատեւ եւ կարգաւորեալ աշխատանքով, այլ եւ կարելի կը լինի անցեալի մի կենդանի եւ գեղեցիկ խճապատկեր տեսնել, եթէ քաղկացուցիչ մասերի գոյնզգոյն քարերը խնամքով հաւաքուին եւ յաջորդութեամբ դասաւորուին իրենց տեղերում: Հէնց միայն յիշատա-

կարանների եւ արձանագրութիւնների ժողովածուները ո՛րչափ գնահատելի նիւթ են մատակարարում այդ շրջանի բազմակողմանի եւ փաստացի լուսարանութեան համար, որի շատ կէտերը մութ կը մնային առանց դրանց:

«Տասնեակ տարիներ հետամուտ հայ գրչութեան եւ մանրանկարչական արուեստների ուսումնասիրութեան, ինչպէս եւ ճարտարա-

(aquarelle), որոնք հնարաւորութիւն են տալիս, մեղնից առաջ կատարուած աշխատութիւնների հետ, աւելի մանրակրկիտ, իրական կամ փաստական տուեալների վրայ հիմնել մեր ուսումնասիրութիւնը:

«Զաքարեանց շրջանում ծագած հայ իշխանական տոհմերի պատմութիւնն իբր ուղեգիծ եւ թոռանք ընդունելով, մենագրական աշխատանքներով (monographie) կամենում



Գ.ԱՐԵՊԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՅՈՎ.ԱԿՈՒՆՆ

պետական յուշարձանների, որչափ նրանք օժանդակ կարող են հանդիսանալ ընդհանուր գեղարուեստական հոսանքներն ու երեւոյթները հասկանալու եւ լուսարանելու, յաջողւել է մեզ անբաւ նիւթ հաւաքել այդ ուղղութեամբ, ճշտութեամբ արտագրելով կամ լուսանկարելով հազարաւոր ձեռագրներից յիշատակարաններ կամ պատմական հատուածներ, արձանագրութիւններ, շէնքեր, քաղաքակներ, ռակերչութեան, ասղնագործութեան եւ ժողովրդական արուեստի արտագրութիւններ՝ երբեմն եւ գունագործ արտանկարութիւններով

ենք պարզել եւ Արեւելեան Հայաստանի աւելի քան հինգ հարիւր տարուայ պատմութիւնը, քաղաքական եւ արտաքին կողմերից աւելի շինարարական-կուլտուրական-գեղարուեստական ստեղծագործութիւնների պատկերը տալ իւր ելեւէջներով, որ ի վերջոյ պատմութեան էութիւնն է, անցաւոր երեւոյթների մէջ աւելի միայնում:

«Խաղապկեանք կամ Պոօշեանք Հայոց Պատմութեան մէջ» աշխատութիւնը այդ կարգի գործերից մէկն է միայն. դրան պիտի յաջորդեն Օրբելեան, Վաչուտեան, Խաչենոյ,

Դոփեանց, Շահուեսեցոց, Մամիկոնեանց եւ Արծրունի (Մահկանաբերդի) տոհմերին նուիրուած մեծ եւ փոքր աշխատութիւններ, իրաքանչիւրը մի ամբողջութիւն, քայց փոխադարձաբար իրար լրացնող եւ ըլլող միասին մի նպաստ արեւելեան քովանդակ Հայաստանի պատմութեան լուսաբանութեան վերեւ գծուած սահմանի մէջ։ Եթէ յաջողի մեզ այս ծրագիրն իրագործել, որի մի մասը պատրաստ է, միւսի նիւթերը հաւաքուած, կարծում ենք՝ ԺԳ. եւ յետագայ դարերի գիտական պատմութեան տուած մեր լուծայի հետ նպաստած կը լինենք եւ ուրիշներին նոր ուսումնասիրութիւններ կատարելու այն նիւթերի հիման վրայ որ ըստ մեծի մասին մեր հնագիտական ճանապարհորդութիւնների հետեւանք են, տեղն ու տեղը ստուգած, լուսանկարած կամ նկարագրած, հնարաւորութիւն տալով նաեւ վերաստուգելու սեր սիտքերն ու եզրակացութիւնները։

«Ներկայիս լոյս է տեսնում «Ռազբակեանք կամ Պոռեանք Հայոց Պատմութեան մէջ» աշխատութեան միայն առաջին պատմական մասը. երկրորդը, որ պատրաստ է դարձնալ իւր ընդգործի եւ կլիշէներով, յապարդում է միայն տեխնիքական պատճառներով, որ յոյս ունինք շուտով վերացնել եւ շարունակել տպագրութիւնը. վերնագիրն է «Ռազբակեանք եւ կամ Պոռեանք հոգեւոր կեդրոններն ու վանքերը», որի մէջ եւ մշտնուէ՛ք միջնադարեան Հայոց «Համապարան»ի՝ Գլաձորի դպրոցի պատմութիւնը ընդարձակ դիւտով։ Երկրորդ մասի հետ կը հրատարակուի երրորդ մասը, յաւելուածները, այսինքն յիշատակարաններն ու արձանագրութիւնները՝ իրենց գիտական ապարատով, որով կը լրացանայ եւ ամբողջ հատորը։»

Այս առաջին հատորը, զարդարուած 420 նկարներով, որ տպագրապէս կատարեալ չըլլալով հանդերձ՝ բաւական որոշ են, եւ որ կը ներկայացնեն շինութիւններ, քանդակներ, արձանադրութիւններ, ասղնագործութիւններ, օսկերչութեան նմուշներ, գրչութեան եւ մանրանկարչութեան էջեր, հն. հն., գիտական հոյակապ աշխատութիւն մըն է որ Հայ ցեղի պատմութեան եւ արուեստի ամենէն շահեկան շրջաններէն մէկուն վրայ նոր ու ճոխ տոբիւմանիքով եւ հմուտ, խորաթափանց քննութեան մը արդիւնք եղող

մեկնաբան տեսութիւններով՝ առատ ու յստակ լոյս կը տնոէ։ Ցանկալի է որ այս սքանչելի հատորը ծանօթ դառնայ արտասահմանի մեր գրողներուն, գրասէրներուն ու հմուտներուն. ցանկալի է մանաւանդ որ գտնուին հայ արուեստի եւ քանասիրութեան ունեւոր բարեկամներ որ օգնեն Գարեգին արքեպիսկոպոսին հրատարակելու համար իր ծրագրած խոշոր եւ ամփքան կարեւոր գործին ըրող հատորները, որ կրնան հայկական հմտութեան յիշատակարան մը կազմել, ու մեծապէս ցանկալի է նաեւ որ միջոցներ տրուին իրենի լոյս ընծայելու հայ մանրանկարչութեան նուիրած իր գերմաններէն քննական ընդարձակ պատկերագրող աշխատութիւնը, որ, պատերազմէն առաջ յօրինուած, մինչեւ այսօր կը սպասէ իր հրատարակման ժամուն, եւ որ Ստիլդովսկիի Հայ ճարտարապետութեան նուիրուած հեղա աշխատութեան քով գրուելու արժանի եւ գայն լրացնող թանկագին գործ մը պիտի ըլլայ։

Գարեգին արքեպիսկոպոսէն ստացայ նաեւ վերջերս ուրիշ զրբոյղ մը. «մի էջ Հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից», որ տպուած է նախ Հալէպի առաջնորդ Արտաւազդ եպսկ. Սիրմէկանի շատ լաւ խմբագրած, զրական, քանասիրական ընտիր ու արժէքաւոր նիւթերով լեցուն ՏԱԹԻՆ տարեցոյցին մէջ ու յետոյ մասնաւոր զրբոյղով լոյս տեսած։ Ասիկա ուսումնասիրութիւն մըն է Հայ հին ձեռագիրներու կազմի՝ այսինքն քանդակագործ կողմերու՝ արուեստին, ԺԳ. դարէն (որմէ առաջ արտագրուած նոյն արուեստի նմուշներէն զեռ ոչինչ հասած է մեզի) մինչեւ ԺԶ. դար։ Ուսումնասիրութիւնը գիտարուած է քսանեւմէկ նկարներով որ քանդակեալ կողմերու ամենէն ինքնատիպներէն ու գեղեցիկներէն շարք մը կը ներկայացնեն։ Ուսումնասիրութեան վերջին հատուածը լաւ կը լուսաւորէ նիւթին կարեւորութիւնը եւ նոյն ինքն այդ ուսումնասիրութեան արժէքը։

«Մեր ցուցադրած նիւթերը ԺԳ. դարից սկսած կապուած են, ի հարկէ փոքր չափով, հայ ընդհանուր արուեստի եւ կուլտուրայի ընթացքին, եւ եթէ տեղի սղութիւնը չարգելէր մեզ փոքր ինչ աւելի բազմակողմանի օրինակներով լուսաբանել եւ համեմատել մանրանկարչական պատկերագրութեան

գարդագորութեան հետ, խնդիրը շատ աւելի պարզ կը լինէր: Ինչպէս մանր արուեստի միւս ճիւղերը, այնպէս էլ ոսկերչականը կապուած է ընդհանուր ազգային արուեստի հետ եւ անշուշտ նիւթ չի տալիս ամբողջի լուսաբանութեան համար: Ճարարագրաբար ԺԳ. դարից աւելի վաղ մնացորդներ չունինք այս ճիւղից, բայց յետագայ դարերի մէջ եւս պահուած են որոշ չափով հնազոյն շրջանների աւանդները:

«ԺԳ. եւ ԺԷ. դարերից մեզ հասած մի քանի օրինակները, ինչպէս Կոստանդին կաթողիկոսի եւ Էւալի Պոռչանի մատանց պահարանները մեր ցուցադրած կազմերի հետ» դարդ կարող են լինել ամէն մի ազնիւ արուեստի համար: Կազմերի կողմից առատ նիւթ ունինք յատկապէս վերջին դարերից՝ առաւել կամ պակաս յաջողութեամբ. եթէ սրանց վերայ աւելացնենք եկեղեցական քաղաքապետական անօթներէ, խաչերի, են., մնացորդները բուն ժողովրդական զգեստի հետ կապուած զարդ ու զարդարանքի հետ, մեր առաջ կը բացուի ընդարձակ ասպարէզ հայ մշակոյթի եւ արուեստի այս ճիւղի ուսումնասիրութեան: Ուկերչական արուեստը մեր մանր արուեստի միւս ճիւղերի համեմատութեամբ ամենից հարուստ է եւ ամենից կարեւորը, միայն պէտք է հաւաքել, ուսումնասիրել եւ մատչելի դարձնել գիտութեան:

«Նորագոյն արուեստը, հետեւելով նոր դադափարախօսութեան եւ հասարական կեանքի ձեւակերպման, չպէտք է կտրէ իւր օրգանական կապը անցեալի հետ եւ պէտք է օգտագործէ այն, յատկապէս ձեւերի ստեղծագործման եւ տեխնիկայի զարգացման մէջ: Ո՛րչափ նիւթեր կան կան կարասիքի, անօթների, ասղնագործութեան, զորդագործութեան, կտաւեղենների եւ մետաքսեղենների մշակութեան համար, որ մինչեւ այժմ կատարեալ անուշադրութեան են մատնուած մեր կողմից: Ապրում ենք պետական նոր կեանքով, որ խրախուսում է ազգային մշակոյթների պահպանութիւնն ու զարգացումը. պէտք է որոպնենք եւ գտնենք այն ուղիները որ նոր արուեստի ծագման եւ ծաղկման հիմունքներն են կապում: Իսկ այդ հիմունքներից մէկը, եթէ չասենք ամենակարեւորը, անցեալ նիւթերի հաւաքումն է, ցոյցադրումը եւ իրանց ուսումնասիրութիւնը:

»

Հայաստանի այժմեան գրական կամ բանասիրական արտագործութեանց մաս կը կազմեն Կարէն Միքայէլեանի Գոյնեկի կոլը եւ Արամ Երեմեանի Սեւանը, թէեւ առաջինը տպուած Մոսկուա եւ երկրորդը՝ Վինետիկ:

Կարէն Միքայէլեան, որուն համակրելի անձնատրուութիւնը արտասահմանի Հայերը մօտէն ճանչցան քանի մը տարի առաջ իբր 20-ի պատուիրակի իր Եւրոպա ու Ամերիկա ըրած պտոյտի միջոցին եւ որ անցեալ տարի հրատարակած էր իր այդ պտոյտի — «Գլխաւորապէս Ամերիկայի — տպաւորութիւններն ու յիշատակները սրածիւր ու կենդանի պատկերներով խառնող պատմութեան քննարկ հաւաքածու մը (Majestic), ներկայ հատորին մէջ ամփոփած է իր շարքը մը պատմութեան զորքը եւ «Իր ցմբան իրեկոյ եւ Մաթեստիկ զրքերու միջեւ ընկած ժամանակամիջոցում» եւ լոյս տեսած են զանազան պարբերականներու մէջ, բացի Հերալդ Ռայդին որ անտիպ է հաւաքածունը կ'սկսի Գոյնեկի կոլը տիրուղոսով ալլեգորիստով մը (այլաբանութիւն) որ բոլոր գոյներուն ատելութիւնն ու կոլը կը պատմէ կարմիր գոյնին դէմ եւ այս վերջնայն յաղթանակը, այլաբանութիւնն մը որ գրուած է արդէն պատմաբանի տառով, 1908-ին, եւ հրատարակուած մարքսիստ հանդէսի մը մէջ, ինչ որ ցոյց կուտայ գրողին վաղեմի համակրութիւնները Ռուսոյի մէջ պատրաստուող յեղափոխական շարժման:

Պատմութեանը (թուով հինգ) որ կը յաջորդեն այս այլաբանութեան, ունին այն ժողովրդի, յայտակ ու խնամեալ ոճը որ յատուկ է Միքայէլեանին, նուրբ դիտողութեան ու փափուկ երգիծանքի յատկութիւնները, արագ, բնական, կեանքոտ պատմութեան շնորհքը զոր իր նախկին գործերուն մէջ գտած ենք արդէն: Գիրքը լոյս տեսած է Մոսկուա, «Հերմէս Հրատարակչութեան» միջոցով, շատ զեղեցիկ տպագրութեամբ:

Արամ Երեմեան, որ քանի մը տարի առաջ յօրինած էր Ռոբերդային Հայաստանի հին ու նոր նկարչներու եւ արձանագործներու մասին այնքան շահեկան աշխատութիւն մը որ տպուցեալ Արագած երկշարաթաթերթին մէջ եւ յետոյ առանձին գրքով, Ռոբերդային Հայաստանի զեղարուեստական կեան-

քը արտասահմանի Հայոց ծանօթացնելու նոյն պատուական աշխատանքին մէջ ուրիշ լրացցելի մասը կը բերէ Սեւան հատորով, Հայ երաժիշտներուն եւ Երեսնի նորահաս տասն Հայ Պետական Վոնսերովթուարին ու Լենինականի Երաժշտական Սթիւտիային վերայ տալով մանրամասն տեղեկութիւններ: Այնտեղ, բայց ի երաժշտական այդ երկու մեծ հիմնարկութեանց ինչպէս եւ թիֆլիսի Հայարտունի երաժշտական սեկցիային, Բագուի Հայարտունին եւ Մոսկուայի Հայ Երաժշտական Խմբակցութեան նուիրուած գլուխներէն, մանրամասն ուսումնասիրութիւններ յատկացուած են հետեւեալ վարպետ երգահաններուն (compositeur), Ալ. Սպենդիարեան, Ռոմանոս Մելիքեան, Սպիրիտոն Մելիքեան, Ովսանես Տէր-Գրիգորեան, Արշակ Աղաբեան, Նիկողայոս Տիգրանեան, Անուշաւան Տէր Դեւոնդեան, Սարգիս Բարխուդարեան: Ազատ Մանուկեան (այս վերջին երկուքը իրենք իսկ հոն տուած են իրենց ինքնակենսագրութիւնը), Անտոն Մայիլեան, Դանիէլ Ղազարեան, եւ «նորագոյն ծիլեր»ը, Կարօ Յովհաննէսի Զաքարեան, Յովհաննէս Պողոսի Եղիազարեան, Վարդգէս Գոգոբի Տալեան, Արշալոյս Բագարատի Ալվազեան, Վահան Աւետիսի Ումր-Շատոյ Երաժիշտ Արմին Տիգրանեանի հիւանդութեան պատճառով կենսագրութիւնը չէ կրցած գրուիլ հոն եւ յիշատակութիւնը կայ միայն ու իրմէ երաժշտական կտոր մը, միւս ծանօթ երաժիշտներէն մէկ մէկ կտորի հետ որ կը կազմեն զրքին վերջին մասը: Պէտք է այս մեծապէս շահեկան զիրքը նորարարի օրտասահմանի մէջ, Լուսոյք մըն է տեսնել հոն ինչ լայն զարգացում կը գտնէ այժմ Հայաստանի մէջ մեր նոր երաժշտութիւնը, եւրոպական արուեստի ներքո իրեններով ու հմտութեամբ վերանորոգուած ու ճոխացած, եւ խորքին մէջ հայ ժողովրդական երգին հետ կապ պահող, եւ որ հետզհետէ կը յառաջանայ ու կ'ընարթնացի տաղանդաւոր արուեստագէտներու շքեղ հոյլի մը շնորհիւ, հոյլ որուն կուլայ փայլը հասարակութիւնը նորածիլ երաժիշտներու թարմ ու յուսատու խումբ մը:

Ուսումնասիրութիւնները գրուած են մեծ մասամբ Արամ Երեմեանի ձեռքով, որուն կատարած գործը թէ՛ հրէկ իրր Ռուսիոս հանդէսի խմբագիր, թէ՛ այժմ թիֆլիսի Հայարտունի

թանգարանի մէջ իր պաշտօնին հնարամիտ ու եռանդուն կատարմամբ, եւ թէ՛ արտասահմանի Հայոց Հայաստանի զեղարուեստական կեանքը ճանչցնելու ձգտող այս հատորներով ու լլնութիւն բերած նոյն ոգով սիրուն աշխատակցութեամբ, մեծ գովաստի արժանի է: Մասամբ ալ այդ ուսումնասիրութիւնները գրուած են աշխատակիցներու ձեռքով (Յովհաննիսեան, Ռ. Տ. Վահանեան, Ա. Ա. Ռ. Տր., Դանիէլ Ղազարեան, Վահան Ումր-Շատ, Antonios, Ա. Տօնիկ, Սիրաս):

Գրքը, մեծագիր պատկերազարդ գեղեցիկ հատոր մը, վեհնակի Ս. Ղազարու վառքը տպուած, մաքուր ու խնամեալ հրատարակութիւն մըն է՝ հին ուղղադրութեամբ, եւ պէտք է գտնուի ամէն արուեստասէր եւ ազգասէր Հայոց գրադարանին մէջ՝ իր զոգեակին, Հայաստանի նկարիչներու եւ արձանագործներու նուիրուած լլմանալիսին հետ:



Թէեւ արտասահման տպուած, բայց եւ Հայաստանի գրականութեան կը կապուին նաեւ Տիկին Զապէլ Եսայեանի Պրոմէթէոս Ազատագրուածը եւ Յովհ. Յակոբեանի «Որիք, Հայաստան», տպաւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, զիրքը, յառաջիւր Մոսկուա եւ Հայաստան ճամբորդութիւնէ մը յետոյ Փարիզ գրուած եւ Փարիզ տպուած, երկրորդը Երեւան գրուած ու տպուած, երկուքն ալ նպատակ ունենալով խոր. Հայաստանի այժմեան կեանքը պատմիրացնել: Երկուքն ալ՝ արժէքաւոր գործեր, բայց քիչ մը միակողմանի, միայն զրական կողմերը ցոյց տալու կանխակալ մտածմամբ տիրապետուած: Յակոբեանի զիրքը իրողութիւններու եւ թուանշաններու վերայ զիւստիւրպէս հիմնուած, կատարուած գործերու անհերքելի փաստերուն կրթնած, այդ զրական կողմը ցոյց կուտայ յստակ եւ համոզիչ ձեւով մը եւ մեծապէս օգտակար աշխատութիւն մըն է: Երկրորդը աւելի արժէք ունի իր զրական յատկութիւններով: Տիկին Զապէլ Եսայեան լեցուն է տաղանդով, եւ Հայաստանի բնակարաններուն, Երեւանի հանրային կեանքի այս կամ այն տեսարաններուն պատկերացումը իր այս գործին մէջ կենդանի է եւ հրապուրիչ: Թիւրութիւնը՝ ծայրայեղութեան ու միօրինակութեան մըն է իր

հիացական խանդավառութեան, որ անկեղծ է, անտարակոյս, բայց որուն արտայայտման մէջ չափը չէ պահուած: Արքայութիւնը նկարագրող Տանթէին մտայնութեամբ զրած է կարծես, մինչ, աւա՛ղ, աշխարհիս վրայ չկայ արքայութիւն, չկայ ո եւ է տեղ ո եւ է հանրային կեանք, որ իր պակասներն ու թերութիւնները չունենայ: Շատ տեղ ալ՝ սքանչելի

կեանքէն զգուած հայրենաբաղձ Հայու հոգի մը որ կ'երթայ Հայաստան եւ հոն տեսնելով նոր շունչով մը ուղիորուած կեանք մը, տենդոտ ու երիտասարդ, եւ ուր Հայ տարրը, Հայ լեզուն կը տիրեն, ամէն ինչ գեղեցիկ կը գտնէ, իր սիրտը ավտոմատ, երանութեամբ լեցուն կը զգայ, ու նոյն իսկ — ինչո՛ւ չէ — ազգասիրական զգացման գերազդու-



ՇԻՐՎԱՆՔԱԳԻ (1930)

վիպասանը որ կայ Տիգրին Եսայեանի մէջ չափազանց կը վերերեւայ, ու մերթ գէշ կ'ազդէ՝ որովհետեւ իր տեղը չէ: Այս նկատողութիւններս այնքան ճիշտ են, որ նոյն իսկ Պ. Խանոյեան, որ հոս էր զբօրն լոյս տեսած պահուն, խորապէս գնահատելով հանդերձ անոր լաւ կողմերը, քննադատութեան պակասը եւ վիպասանական հոյը ի վեր հանած էր երկ-ւանի իր յօդուածին մէջ: Ինչո՞ւ Տիգրին Եսայեան չէ մտածած բուն իսկ վէպ մը հանել իր Հայաստան ճամբորդութիւնէն, եւ հոն գնել զազութային անգաստական ու անստոյգ

թիւնէն՝ պոլշէվիք կը դառնայ: Վիպական հզօր գործ մը կայ գրելիք Հայդ նիւթին վրայ, որուն դեռ ոչ ոք չէ մօտեցած: Տիգրին Եսայեան կրնայ ո եւ է մէկէն աւելի լաւ գրել այդ վէպը, եւ ես կը ցանկամ որ գրէ զայն, որովհետեւ պոլս-գործող մը կրնայ ըլլալ անիկա:

••

Այս քրոնիկին Հայաստանեան բաժինը չեմ կրնա, փակել առանց յիշատակելու Հայ գրականութեան մեծ տննը որ հոն պիտի կա-

տարուի այս օրերս իսկ, Շիրվանզադէի գրական յիսնամեայ գործունէութեան յոգեխնամը: Մեր ժամանակակից մատենադրութեան հոյակապ վեթեւանը պիտի փառաբանուի հայրենիքի սրտին մէջ, Հայաստանի ու Կովկասի բովանդակ Հայութեան կողմէ, այն անգնահատելի ծառայութեանց համար զոր ան մատոյց հայ վէպին ու թատրոնին: Անոր գրա-

բաստող է ընկերական յեղափոխութեան: Ու այդ յորելեանին... ինչպէս կ'երևայ կարգադրիչ յանձնաժողովի կազմէն, ուր Հայ ժողովրդի ամէն տեսակ ներկայացուցիչներու հետ, (կառավարութեան անդամներ եւ քաղաքացիներ, գրագէտներ, արուեստագէտներ, գիտուններ, են.) կան եւ վրացի եւ Ազրպէյճանցի անձնաւորութիւններ, պիտի մասնակցին նաեւ



ԸՆԿԵՐ ԵՐԿԱՆԱՅՈՒԵ

Գծագրութիւն, արտապուած Գրական Դիրքերում ամսագրեմ

կանութիւնը, ըլլալով հանգերձ հարազատ հայկական, չէ ունեցած երբեք նեղ ազգայնամոլ ոգի. անոր ուսումնասիրութեան դաշտը հայ պոետական եղած է զիբաւորապէս, եւ չըլլալով հանգերձ ընկերվարական՝ ան այդ դասակարգի թերութիւններն է որ ձաղկած է առաւելապէս, գրական գծերն ալ չանտեսելով. ան մանաւանդ խոնարհներուն, կեղեքուածներուն, գրեղացիին ու քանւորին, ոչ շողոքորթող այլ կարեկից, ու անկեղծ բարեկամը եղած է, անոնց ոչ միայն տառապանքներն ու խաւարի մէջ փտուումը, այլ և անոնց թերութիւնները անաշուտօրէն նկարելով հանգերձ՝ անոնց ընտիր տիպարներուն մէջ ի յայտ եկող տիրական առաքինութիւնները, ժողովրդական սրտին պարզութիւնը եւ մաքրութիւնը ի վեր հանած է: Անոր համար, այդ «երէկուան» գրագէտը այսօրուան կարմիր Հայաստանին մէջ ալ կը յարգուի անկեղծօրէն, ոչ միայն իբր գրական վարպետ որուն տաղանդի բարձրութիւնը ամենքն կ'ընդունուի, այլ եւ իբր գրող մը որ մարդկայինը նախընտրած է թթու ազգայնամոլականին, որուն պարծը յեղափոխական չէ, քայլ պատ-

Վրաստանի եւ Ազրպէյճանի մտաւորականութիւնն ու ժողովուրդը. որովհետեւ Շիրվանզադէ վիպասանն է ոչ միայն Կովկասի Հայութեան, այլ բովանդակ Կովկասի բոլոր ցեղերուն կեանքին ու բարքերուն. ան Կովկասի մեծ վիպասանն է, ինչպէս Սայաթ-Նովա Կովկասի մեծ բանաստեղծն եղաւ Առաջին յորելեանական հանդէսը արդէն կատարուել է Բաղու (Շիրվանզադէ Շամախեցի է, եւ Շամախի Ազրպէյճանի մաս կը կազմէ), երկրորդը պիտի կատարուի Նրեւան, երրորդը՝ Լենինական: Ստանալով կարգադրիչ յանձնաժողովի շրջաբերականը, ես հետեւեալ հետագիրն ուղղեցի Հայաստանի Հոսաւորութեան Կոմիտային.

«Գորովալից սքանչացումս ու սրտագին շնորհաւորութիւններս Շիրվանզադէին, ճշմարտութեան մեծ նկարչին, մեր ժամանակակից գրականութեան պատկառելի երէցին, որ վերածնեալ հայրենիքի հողին վրայ փառաւորապէս կը տօնուի մեր մշակոյթին իր մատուցած յիսնամեայ շքեղ ծառայութեանց համար»

ՍՐՇԱՆ 20ԳՆԵԱՆ